ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Բյուջեում նախատեսվող փոփոխությունների

Հիմք ընդունելով 2023 թվականի հունիսի 26-ի Սիսիանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության բաժնի առաջատար մասնագետ Վարդան Խաչատրյանի և աշխատակազմի զարգացման ծրագրերի, տուրիզմի, առևտրի, սպասարկման և գովազդի բաժնի առաջատար մասնագետ Գրիգոր Ասատրյանի զեկուցագրերը՝ ավագանու որոշման նախագծով առաջարկվում է ֆոնդային բյուջի 04.5.1 ծրագիր 5113 հոդվածից՝

1. 750000(յոթ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ տեղափոխել 08.2.7 ծրագիր 5113 հոդված՝ Սիսիան համայնքի պանթեոնի վերակառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռքբերման համար,
2. 100000(մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ տեղափոխել 08.2.7 ծրագիր 5113 հոդված՝ Սիսիան համայնքի պանթեոնի վերակառուցման աշխատանքների փորձաքննության փաստաթղթերի ձեռքբերման համար,
3. 4500000(չորս միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ տեղափոխել 08.2.7 ծրագիր 5113 հոդված՝ Սիսիան համայնքի պանթեոնում հուղարկավորված Վահե Հովսեփի Հովսեփյանի /զոհված 23.09.2022թ./, Սերժ Սամվելի Հովսեփյանի /զոհված 15.11.2022թ./ և Էդգար Վահանի Սուլեյմանյանի /զոհված 17.05.2023թ./ շիրմաքարերի տեղադրման համար:
4. 1600000(մեկ միլիոն վեց հարյուր հազար) ՀՀ դրամ տեղափոխել 06.3.1 ծրագիր 5113 հոդված՝ սյուն թվականի փետրվարի 21-ին Սիսիան համայնքի և <<Շեն>> բարեգործական հասարարական կազմակերպության հետ կնքված թիվ Շ/1-23 պայմանագրի շրջանակում <<Սյունիքի մարզի Սիսիան համայնքի Շաքի գյուղի խմելու ջրի ավազանի և 700մ ջրագծի վերանորոգում>> ծրագրի 7968800(յոթ միլիոն ինը հարյուր վաթսունութ հազար ութ հարյուր) ՀՀ դրամի ընդհանուր վերանորոգման աշխատանքների Սիսիան համայնքի ներդրում:

Ինչպես նաև հիմք ընդունելով 2023 թվականի հունիսի 14-ի Սիսիանի համայնքապետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի լիազորությունները կատարող Վեյնամին Թանգյանի զեկուցագիրը ավագանու որոշման նախագծով առաջարկվում է վարչական բյուջեի պահուստայի ֆոնդի 11.1.2 ծրագիր 4891 հոդվածից

1. 1000000(մեկ միլիոն) ՀՀ դրամ տեղափոխել 01.6.1 ծրագիր 4823 հոդված՝ Շաղատ, Աղիտու, Անգեղակոթ, Բալաք և այլ բնակավայրերի ջրօգտագործման թույլատվությունների ձեռքբերման համար:

Նախկին Գորայք համայնքի Ծղուկ բնակավայրի կենցաղի տան տանիքի արևային կայանների կառուցման աշխատանքների համար, պետության մասնաբաժինը վճարելու նպատակով նախատեսվում է 06.1.1 ծրագիր 5113 հոդվածում ավելացնել 8517600 (ութ միլիոն հինգ հարյուր տասնյոթ հազար վեց հարյուր) ՀՀ դրամ, որն տրամադրվել է պետության կողմից և պլանավորվել է ֆոնդային բյուջեի /ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ԿԱՊԻՏԱԼ

ԾԱԽՍԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ (ՍՈՒԲՎԵՆՑԻԱՆԵՐ)/ մասում:

Ֆինանսատնտեսական բաժնի գլխավոր մասնագետի ժ/պ **Դ. Այվազյան**

27.06.2023թ.

ՏԵՂԵԿԱՆՔ

Սույն նախագծի ընդունումից հետո համայնքի բյուջեի եկամուտներն ու ծախսերը կավելանա 8517600 (ութ միլիոն հինգ հարյուր տասնյոթ հազար վեց հարյուր) ՀՀ դրամով:

Ֆինանսատնտեսական բաժնի գլխավոր մասնագետի ժ/պ **Դ. Այվազյան**

27.06.2023թ.